**հինգերորդ դասարան**

| Թեմա 1 | |
|---|---|
| **ՆԱԽԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ/ՀՈԲԲԻ 17ժամ** | |
| **Նպատակ** | |
| • Ներմուծել **նախասիրությունների կարևորության** գաղափարը<br>• Ընդլայնել նախասիրություն/հոբբի թեմային բնորոշ բառերի, արտահայտությունների և կառույցների պաշարը,<br>• Զարգացնել նախասիրությունների, նախընտրելի զբաղմունքների մասին կարճ կապակցված խոսք կազմելու հմտություններ,<br>• **Ձևավորել վերաբերմունք ազատ ժամանակը ճիշտ տնօրինելու և նախընտրած գործով զբաղվելու հանդեպ:** | |
| **Վերջնարդյունքներ** | |
| ***<u>Գիտելիք:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝***<br><br>• Թեմային առնչվող բառապաշարը<br>• Տրված քերականական նյութը<br>• Նախասիրությունների/հոբբիի կարևորությունը<br>• Ազատ ժամանակը ճիշտ և արդյունավետ տնօրինելու ձևերը | ***<u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա***<br><br>• Լսել և հասկանալ նախասիրությունների և հետաքրքրությունների մասին պարզ խոսքը (տեսանյութ, ձայնագրություն և այլն),<br>• Կարդալ և հասկանալ հետաքրքրությունների/հոբբիների մասին պարզ տեքստը,<br>• Հանդես գալ իր նախասիրությունների և հետաքրքրությունների մասին նախապես պատրաստված կարճ խոսքով՝բացատրելով, թե ինչն է իրեն դուր գալիս, ինչը՝ ոչ,<br>• Պարզ արտահայտություններով վարել շատ կարճ երկխոսություն իր և իր ընկերների նախասիրությունների մասին<br>• պարզ խոսքային կառույցներով գրավոր նկարագրել սեփական նախասիրությունները և առօրյան, |

<table>
<tr><td></td><td>

- **Եզրահանգումներ անել ազատ ժամանակը ճիշտ տնօրինելու և նախընտրած գործով զբաղվելու շուրջ**

</td></tr>
<tr><th colspan="2">Բովանդակություն</th></tr>
<tr><td colspan="2">

- Ինչպե՞ս եմ տնօրինում իմ ազատ ժամանակը
- Իմ հետաքրքրությունները/հոբբին

</td></tr>
<tr><th>Առաջարկվող գործունեության ձևեր</th><th>Ընդհանրական գաղափարներ</th></tr>
<tr><td>

- Դերախաղ՝ Իմ հետաքրքրությունները/հոբբին
- Նամակ՝ Ինչ եմ անում ազատ ժամանակ
- Պաստառ՝ Ժամանցի ձևեր
- Ցուցադրություն-վաճառք
- Այց թանգարան, թատրոն, կինո և այլն

</td><td>

**Անհատական և մշակութային արտահայտում**
(նախասիրությունները որպես մշակութային արտահայտման և ստեղծարարության զարգացման գրավական)

</td></tr>
<tr><th colspan="2">Միջառարկայական կապեր</th></tr>
<tr><td colspan="2">

**Մայրենի**- Շարադրել գրավոր տեքստ ազատ ժամանակի/նախասիրությունների մասին:
**Կերպարվեստ**-Պատկերել իր ժամանցի ձևերը:
**Տեխնոլոգիա**-Պատրաստել պաստառ հետաքրքրությունների վերաբերյալ:

</td></tr>
<tr><th colspan="2">Կապը հանրակրթության չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</th></tr>
<tr><td colspan="2">

**Հ 3, Հ 27, Հ 28, Հ 52**

</td></tr>
</table>